ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2023 թվականի նոյեմբերի 22-ին

ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 9

ԾԱՌԱՅՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՈՒՄՆԵՐԸ

~~**Հոդված 29. Ծառայողի պարտադիր պետական ապահովագրությունը**~~

~~1. Ծառայողը ենթակա է կյանքի պարտադիր պետական ապահովագրության՝ համապատասխան բյուջետային միջոցների հաշվին:~~

~~2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ապահովագրությունը տարածվում է նաև հաշմանդամ դարձած Ծառայողների վրա՝ աշխատունակության կորստի չափին համապատասխան, որը սահմանվում է տոկոսային հարաբերությամբ՝ զոհվելու (մահանալու) դեպքերում ապահովագրվելուն համապատասխան՝ ընդհանուր գումարների նկատմամբ:~~

~~3. Ծառայողի պարտադիր պետական ապահովագրության և ապահովագրական գումարների վճարման կարգն ու պայմանները սահմանում է Կառավարությունը:~~

Հոդված 29. Դրամական օգնությունը Ծառայողի զոհվելու կամ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու դեպքում

1. Ծառայողական պարտականությունները կատարելիս զոհվելու դեպքում Ծառայողի ընտանիքի անդամներին, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու դեպքում Ծառայողին տրվում է միանվագ դրամական օգնություն:

2. Ծառայողի զոհվելու կամ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու դեպքում տրվող միանվագ դրամական օգնության չափն ու վճարման կարգը սահմանում է Կառավարությունը:

ԳԼՈՒԽ 12

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 35. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Ծառայության կանոնադրությունը, Ծառայության հաստիքացուցակը և Ծառայողների քանակը ենթակա են հաստատման մեկամսյա ժամկետում, իսկ Ծառայողների պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը ենթակա են հաստատման երկամսյա ժամկետում:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո «Հայանտառ», ««Զանգեզուր» կենսոլորտային համալիր», «Արգելոցապարկային համալիր», ««Արփի լիճ» ազգային պարկ», ««Դիլիջան» ազգային պարկ», ««Խոսրովի անտառ» պետական արգելոց», ««Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների պահպանությունն իրականացնող աշխատողները շարունակում են պաշտոնավարել որպես Ծառայության ժամանակավոր պաշտոնակատարներ:

4. Ծառայողները սույն օրենքով իրենց վերապահված լիազորություններն իրականացնում են սույն օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքով պաշտոնի նշանակվելուց հետո, բայց ոչ ուշ, քան մինչև ~~2025~~ 2027 թվականի հունվարի 1-ը:

5. Սույն օրենքով սահմանված այլ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ընդունվելուց հետո՝ վեցամսյա ժամկետում: